

MESROB K. KRIKORIAN, **ARMENIANS IN THE SERVICE OF OTTOMAN EMPIRE 1860-1908**, Routledge Direct Editions, London, Henley and Boston, 1977, pp. 149,

ՄԵՍՐՈՊ Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՀԱՅԵՐ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՄՐՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ 1860-1908, Ռուբլեմ Տայրեֆու Հրատարակութիւններ, Լոնտոն, Հեմլի եւ Պոսթոն, 1977, 149 էջ:

*«Հարիւրաւոր գիրքեր դրուած են Հայկական Հարցի եւ [հայոց դէմ գործադրուած] կոտորածներու մասին, [սակայն] տակաւին շատ քիչ բան ծանօթ է Օսմանեան Կայսրութեան մշակութային, տնտեսական եւ վարչական կեանքին եւ զարգացման մէջ հայոց ծառայութեան մասին», կը գրէ Գրիգորեան իր յառաջաբանին առաջին իսկ նախադասութեամբ: Եւ այդ քիչերէն մէկը, հաւանաբար եւ գլխաւորը՝ լոյս տեսած է Թրքերէնով. Y. Çark, **Turk Devleti Hizmetinde Ermeniler, 1453-1953**, Istanbul, 1953, ss.304 (Ե. Չարք, Թուրք Պետութեան Ծառայութեան Մէջ՝ Հայեր, 1453-1953, Իսթանպուլ, 1953, 304 էջ): Գրիգորեան ծանօթ է վերոյիշեալ աշխատասիրութեան, որ կը հանդիսանայ իր օգտագործած աղբիւրներէն մէկը: Որդեգրելով հանդերձ Չարքի գիրքին խորագիրը, Գրիգորեան ժամանակի տարածքով ու աշխատանքի ներքին բաժանումով կը տարբերի յիշեալ հեղինակին երկասիրութեան ընդհանուր կերպէն: Չարք՝ ժամանակագրական հինգ հանգրուաններու կը բաժնէ իր աշխատանքը, անոնցմէ իւրաքանչիւրին մէջ պարզելով Օսմանեան Կայսրութեան տարբեր ասպարէզներուն մէջ ծառայող գլխաւորաբար հայ*

անհասանելի ու գործունէութիւնը, ինչպէս նաև երբեմն անդրադառնալով դուռ հայկական կեանքի ներքին անցուղարձերուն: Բայց նաև պէտք է յիշել թէ ընդհանրապէս կայսրութեան մայրաքաղաքն է խնդրոյ առարկայ այն աշխարհը, որուն իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է Ձարք: Գրիգորեան՝ 1860-1908 թթ.ու միջև երկարող ժամանակաշրջանի մը վրայ կը տարածէ իր աշխատանքը, ու կը կեդրոնանայ գլխաւորաբար Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Սուրիոյ (Հալէպ, Դամասկոս, Պէյրութ եւ Լեւոնալիբանան) հայոց՝ Օսմանեան կայսրութեան մէջ կատարած ծառայութեանց վրայ:

Ներածականով (էջ 1-17)՝ իր աշխատասիրութեան սահմանները ուրուագծելէ, ու 1860-1908 թթ.ու միջև տարածուող ժամանակամիջոցին Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ բնակող հայ ժողովուրդին ազդային ու քաղաքական կեանքին հոլովոյթը (Արդային Սահմանադրութիւն, Հայկական Հարցը Սան Սթեֆանոյէն Պերլին, 1894-1896 թթ.ու Համիտի կողմէ հայոց դէմ դործադրուած կոտորածներ) ամփոփելէ, եւ Օսմանեան կայսրութեան հանրային սպասարկութեանց պաշտօններն ու պաշտօնեաները ներկայացնելէ ետք, - ինչ որ ամուր հող կը պատրաստէ ուսումնասիրութեան տրամաբանական ընթացքին, - հեղինակը կ'անցնի իր գլխաւոր հարցի պարզարանման աշխատանքին:

Յաջորդական տասը դրուխներուն համար Գրիգորեան որդեկրած է աշխատանքի ընդհանուր դրութիւն մը, զոր հաւատարմօրէն ի դործ դրած է իւրաքանչիւր պարագային: Հեղինակը ուրուագծելէ ետք տուեալ նահանգին պատմականը, յաջորդականօրէն կը պարզէ շրջանի վարչական կառույցը, կը ներկայացնէ անոր բնակչութիւնը՝ բարդադասական տախտակով, կու տայ հայոց աշխատանքային գլխաւոր ասպարէզները, ապա՝ ծանրանալու համար հայոց ունեցած մասնակցութեան՝ միլիայէթի պետական-վարչական աշխատանքներուն: Իւրաքանչիւր դրուխի վերջաւորութեան՝ ընթերցողը կը ծանօթանայ շրջանի այն հայ անձնաւորութիւններուն, որոնք յիշեալ նահանգին հանրային ու հասարակական կեանքին մէջ կարեւոր պաշտօններ ըստանձնած են: Եւ այդ պաշտօնները կ'ընդգրկեն կառավարական, վարչական, դատական, առողջապահական, երկրագործական, տնտեսական, փոստ-հեռադրական, լրագրական եւ հանրային սպասարկութեանց այլ ասպարէզներ, հող չէ թէ միայն երկրորդական դիրքի եւ աստիճանի վրայ:

Աշխատասիրութեան եզրափակիչ գլուխով (էջ 102-110), Գրիգորեան կը մէկտեղէ իր հաւաքած տուեալները, հասնելու համար որոշ զնահատումներու եւ եզրակացութեանց, որոնք մէջ, եւ արդարացի կերպով, այն իրողութիւնը թէ Օսմանեան կայսրութեան մէջ, 19-րդ դարուն, հայ ժողովուրդի քաղաքական փոխաբարբերութեանց

մէջ դժուարութիւնները սկիզբ առին Ազգային Սահմանադրութենէն : Երբ հայ ժողովուրդին համար Ազգային Սահմանադրութիւնը ազգային «պետականութեան» մը ծնունդն էր, Օսմանեան Կայսրութեան համար «պետութեան» մը մէջ պետութեան» դադարաբար բացարձակօրէն կը մնար անընդունելի եւ անհանդուրժելի :

Հատորի վերջաւորութեան հեղինակը որպէս յաւելում տըւած է Պերլինի վեհաժողովին հայոց կողմէ ներկայացուած խնդրագիրը, եւ՝ «Նոր Թուրք մը Հայկական Անցեալի Մասին» խորագրով՝ Կիւնէյ էրինայի (Երկրադորձական վերահսկիչի օգնական)՝ մէկ դժբութիւնը, որ հայ մամուլին միջոցով, իր ժամանակին՝ արդէն հայ ընթերցող հասարակութեան սեփականութիւնը դարձած էր :

Գիտական ծանօթագրութեամբ, հարուստ մատենագիտութիւնով (յատկապէս արխիւային իր նիւթերով) ու խնամքով պատրաստուած անուանացանկով հանրութեան ներկայացուած այս աշխատասիրութիւնը բարեխիղճ ու բժախնդիր աշխատանքի մը արդասինքն է անշուշտ : Գրիգորեան արդէն ծանօթ անուն մըն է հայագիտութեան ասպարէզին մէջ : Անոր դրախօսուող այս հատորը անդամ մը եւս կը դայ վիկայելութէն ան կը մնայ սփիւտքահայ այն դիտնականներէն մէկը, որմէ այնքան ակնկալելիք ունի տակաւին հայագիտութիւնը :

Աւարտելէ առաջ մեր խօսքը սակայն, կ'ուղենք երկու առանձին հարցեր արծարծել այստեղ, որոնք կը դրաւեն ընթերցողի ուշադրութիւնը :

Արդեօ՞ք կ'արդարանայ հատորին համար որոշուած խորագիրը : Կ'ընդունինք թէ դժուար է հարցին դնահատանքը : Սակայն միաժամանակ պէտք է պարզել իրողութիւն մը : Երբ կը խօսինք Օսմանեան Կայսրութեան «ծառայութեան» մէջ եղող հայոց մասին, պահ մը այն տպաւորութիւնը կ'ունենանք թէ հայը, իր կամքով, եւ իր երկրէն դուրս, մտած է Օսմանի ծառայութեան մէջ : Նմանօրինակ հաստատում մը ընդունելի պիտի ըլլար Պատմական Հայաստանի սահմաններէն դուրս՝ Պոլսոյ, Իզմիրի, Սուրիոյ եւ Լիբանանի հայերուն համար, եւ սակայն երբ կը խօսուի Պատմական Հայաստանի սահմաններուն մէջ բնակող հայուն ծառայութեան մասին, արդէն իրողութիւնը այլ իմաստ կ'ընայ ունենալ միայն : Բռնադրաւուած երկրի մը ժողովուրդը, պապենական իր հողին վրայ, երբ իր աշխարհին ծառայութեան մէջ է, դժուար է դայն որակել որպէս Օսմանեան Կայսրութեան նկատմամբ եղած ծառայութիւն : Իսկ եթէ «ծառայութիւն» է, ապա այստեղ, դժբախտաբար, բառը իր տխուր իմաստը կը զղենու միայն :

Ընթերցողը հարցականի առաջ դնող երկրորդ երեւոյթը՝ աշխարհագրական այն տարազումն է, զոր Գրիգորեան որդեգրած է բնորոշելու համար Արեւմտեան Հայաստանը : Հատորին հեղինակը

կառչած կը մնայ «Անատոլիայի արեւելեան նահանգներ» բացատրութեան, երբ ակնարկութիւնը կը վերաբերի Արեւմտեան Հայաստանի: Գրիգորեւն կը գրէ. «Ես գիտակցօրէն սահմանափակած եմ հետազօտութեանս շրջանը Անատոլիայի արեւելեան նահանգներուն, որ նախապէս կը կազմէր պատմական Հայաստանի արեւմտեան մասը, եւ որ 19-րդ դարու դիւանագիտական լեզուին մէջ (մինչեւ Սեւրի դաշնագրին ստորագրումը, 10 Օգոստոսի, 1920) կը նշուէր որպէս «հայերով բնակուած նահանգներ»» (էջ vii): Ուրիշ տեղ մը՝ «Որպէս աշխարհագրական սահմաններ եւ բնորոշ եմ այն մասը Անատոլիայի, որ Արեւմուտքի մէջ կը կոչուէր «Թրքահայաստան» (էջ 2):

Պատմականօրէն եւ աշխարհագրական իմացութեամբ, եւ առանց պատմութիւնը խեղաթիւրելու, եւ դեռ մանաւանդ մինչեւ 1908 թ., ու տակաւին մինչեւ այսօր, «Անատոլիայի այն մասը» միայն ու միայն Հայաստան կը կոչուի, իսկ պատմա-աշխարհագրական ըստորաբաժանումով՝ Արեւմտեան Հայաստան:

«1923 թ.ից Թուրքական դրականութեան մէջ Անատոլիա անուանում են ողջ Ասիական Թուրքիան՝ ներառեալ Արեւմտեան Հայաստանը եւ Քրդըստանը, որով եւ խեղաթիւրուել է այդ տերմինի աշխարհագրական բովանդակութիւնը»: (Հայկական Սովետական Հանրագիտարան, Ա. հտր., Երեւան, 1974, էջ 373):

Կարիք կա՞ր որդեգրելու այդ խեղաթիւրումը:

Հասկնալի է որ այս նկատողութիւնները չեն նսեմացներ ներկայացուած աշխատասիրութեան գիտական մակարդակը: Տակաւին, կարելի է ըսել որ Գրիգորեանի այս ուսումնասիրութիւնը նորանոր հետազօտութեանց ճանապարհ կը նայ հարթել, որոնք պէտք է զանամբողջական չափ ու կշիռով զնահատելու օսմանեան տիրապետութեան տակ հայ ժողովուրդին վիճակուած կեանքը:

ԵՐՈՒԱՆԻ Հ. ՔԱՍՈՒՆԻ